



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17637



4.7nch4
1877

ՆԱՄԱԿԱՆԻ

ԿԱՐ

ՆՈՒՐԻ

ՈՒՍԱԽՈՂԱՅ ԵՒ ՈՒՍԱԽՈՂՈԽԵԱՅ

Դ. ՏՊՐՈՒՀԻ ՆԱՐԱԵԱՆԵ

12001

Կ. ՊՈԼԻՍ

ԳՈՒՄԱՐՈՒ ԶԱՐԴԱՐԵԱՆ

370.1

G-43

1877

370
3-43

ԱՍՏԱԿԵՆՔ


ԿԱՄ

Վ Ո Ւ Բ Ր

ՈՒՍԱՆՈՂԱՅ ԵՒ ՈՒՍԱՆՈՂՈՒՀԵԱՅ




Ի Տ. ԵՊՐՈՒՀԻ ՆԱՔԱՇԵԱՆՔ



ՀՐԱՄԱՆԱԻ

ՀԱՍԱՐԱԿԱՅ ԿՐԹՈՒԹԵԱՆ
ԺՈՂՈՎՐԾ



Կ. ՊՈԼԻՍ
ԳՈՐԾԵՐԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

—
1877

9020

ԲՆԾԱՅԱԳԻՐ

Նոր տարւոյս առթիւ կ'ընծայեմ
սոյն մատենիկս այն Հայազգի մանկուտ-
եաց որոց մոտաւորական կազմակեր-
պութիւնն տակաւին իւր թերի դըրու-
թեան մէջ լինելը՝ եթէ ուսուցուի
լաւ կ'ըմբռնէ բաժանել բարին ու չա-
րըն, արդարն և անիրաւն, ճշմարիտն
ու սուտն գեղեցիկն ու տգեղն :

Մատենիկս մի քանի նիւթոց վրայ
նամականիի ձեւով խրատք կ'պարու-
նակէ, որսէս Եւրոպացիք յաճախ բա-
րոյափէտերով թէ և նա առաւել աղ-
դոյ սակայն ձեւոց տարբերութեանց
առատութիւնն ալ զդաստիարակու-



429

40

թիւնն ալ աւելի ազգդոյ ընելուն փորձելուն կան :

Գործս խիստ փոքր է , սակայն վտրձքն խիստ մեծ կ'ինի եթէ բազմաթիւ մանկտիք զայն իւրեանց ընթերձման արարկայ ընեն : Եւ եթէ սոյն առաջին փորձին մէջ յաջողիմ կը խոստանամ որ քիչ ժամանտկէն ֆըռուանսացի երեւելի հեղինակի մը նշանաւոր մի գործին հետեւած աղջկանց դաստիարակութեան կամ որ նոյնն է մայրերու իր դիրք մ'ալ 'ի ըցս ընծայեմ :

Քաջալերուիլ կ'յուսամ :

Տ. Ե. ՆԱՔԱՇԵԱՆ

1 Յունիար 1877



ԱԶՅՈՒԽ ԶԱԿԱՅՈՒՄ

1877 Նոր տարւոյս առթիւ նախ մայրական դոգուիչ պարտաւորութենէս և այսպիսի նուիրական օրուան մը մէջ քո տեսութեանդ կարօտութենէն յուզեալ կ'բաղձամ քեզ լոկ իմ մի խրաստ յիշեցնել :

Նախախնամողին բնութեան նուիրատուութեանցը մէջ ամենա առաջինն և ամենապիտանին , ամենածախ ժամանակն իւր արագասահ անկաներու ներքեւէն այս

տարին ալ թաւագլոր գլտորեց իւր
համայնակուլ անդունդին մէջ. բայց
քո վրայ ի՞նչ աղդեցութիւն ու-
նեցաւ զաւակս : Թերեւս թշուառ
մը փրկեց , մի գուցէ արդար մը
հալածեց , թերեւս ընտանիք մը
վերակենդան հաստատեց , մի գու-
ցէ երջանիկներու միութիւնը եղ-
ծեց , մի գուցէ աղդութիւն մը
ոչնչացուց և զայն իւրյափշտակիչ
և սրածայր անիւներուներքեւ ջախ-
ջախ խորտակեց : Գոհ եմ , քաղց-
րիկ զաւակս , դառնութեանց մէջ
իմ յոյսս , իմ էութեանս ժառանգն ,
գու զոր միայն դիտել ախորժէ
հոգիս , դու անշուշտ փոփոխու-
թիւն մը կրեցիր , բայց կ'հաւա-
տամթէ ՚ի բարին . նախ զարդա-

ցուցիր հասակդ և յետոյ մշակելու
փոյթ ունեցար զմիտդ : Գոհ եմ ,
իմ քաղցրիկս , դու ալ խառնեցիր
քո անունը ժամանակի արձանա-
գրութեանց տետրին լաւագոյն կող-
մը . այս է լոկ փառքս և այս է
իմ բաղձացած անմահութիւնն :

Ուսի՞ր զաւակս , լաւագոյնս
վարել ժամանակդ , զի ինչպէս
1876 էն մինչ ցայսօր ամբողջ տար-
ուան մը շրջանէն լաւ դիտեմ թէ
իբր ըոպէի մը տեւողութեան յի-
շատակն չի մնաց քո քով , բայց
եթէ լոկ ինչ որ ուսար այդ ժա-
մանակի հոսանքին մէջ , ըսածս
կը հաստատեն քո անձնական խո-
հականութեան փորձառութիւնն ,
այսպէս է նաեւ առանց տարբե-

րութեան քո ամբողջ կենացդ տեւողութիւնը : Եւ օր մը քո կենաց վարագութին իջած ատեն չի սլիտի ունենաս տենչ մը բայց եթէ լաւ խորհել թէ լաւ վարած ես անցեալլ :

Զանա՛ անմահանալ զաւակս ,
աշխարհ միայն զայն վարելու եւ զանակին տեղեակ լինողներունն է .
Դու այդ պատեհութիւնը ունիս
լրկ զքեզ մտածող ծնողացդ շնորհիւ : Աշխատէ՛ զաւակս , զաշխարհ միայն աշխատողներն կրնան վայելել : Երկրագործն առաւօտէն մինչ երեկոյ իւր բահին վրայ յեցած և իւր քրտամբն իսկ հողն արդասաւորելէն վերջ իւր տունը մտած ատեն կրնայ լաւ իմն զգալ

ընտանեկան երջանկութիւնն : Խաշնարածը ամբողջ օրուան տաքութեան ներքեւ կիզած ճակատն իւր գառներուն քով , լաւ կ'աեղեկանայ գիշերային առողջարար զովութեան յարգին . վերջապէս ամեն հանդարտութիւն աշխատողինն է և այս ճշմարտութիւնն ալ արդէն անհակառակելի է , զի հանդիսան իւր աղդուռութիւնն յայնժամ միայն կունենայ , յորդամ իւրեն մերձ ունի աշխատութիւնն :

Զաւակս , կրկին կ'խրառեմ զքեզ . այդ քո մատղաշ հասակն հարթ ջրոյ մը նմանութիւնը ունի , ամեն ամանի ձեւն կ'առնու : Այժմէն ուսիր աշխատիլ , որպէսդի ապագային չի վարանիս յայդմ մա-

սին։ Գիտցիր որ ժամանակն իւր
ամեն կարողութեամբն զքեզ ևս
փոփոխելու կճգնի, օրմը կ'գայ
ուր գպրոցական կեանքէդ զքեզ
աշխարհային կեանքին մէջ զետե-
զելու կ'ջանայ։ Պատրաստ լե՛ր։

Ի վերջոյ կրկին մայրական
պարտաւորութենէս դրդեալ օր-
ուան առթիւ իբր քեզ օրինակ աշ-
խատելու մղման, կ'սուիրեմ քեզ
ձեռքերովս հիւսած ամրող միամ-
սեայ աշխատանացս արդիւնքն։

Բնդունե՛ զայն մայրական գո-
րովանացս հետ։

ՄԱՅՐԻ

* * *



4 Յունվար 1877

ՍԻՐԵԼԻ ԵՎՐՈՅՑԻ

Եղբայրասիրութիւն, մայր ա-
ռաքինութեանց է լսին։ դու այս
ճշմարտութիւնն քո խիստ մատղաշ
հասակէն սկսեալ իրրեւ սրբազնն
պաշտեցիր։ դու այս սրբազնն
ճշմարտութեան իրրեւ յաւիսենա-
կանին շունչէն սահած պատգամն
լիովին իմն խոնարհած երկրպա-
զեցիր, ընդունելով հարաբեկ սորէնէ
ու ինչ որ հ'ըսէցս որ ժեւ կորուէն։

Եղբայրս, դու սիրտ մ'ունիս
որ չեմ խաբած կամ խաբուած լի-
նել եթէ լսեմ քեզ թէ որպէս

Աղամն և Եւան Աստուածային
սուրբ Հնջոյ աղդեցութեան կուռ-
վըն մասնաւորապէս կազմեալ է :
Կ'յիշեմ լու , եղբայրս , թէ
երբ քեզ հետ վարժարանի դըրա-
սեղանին վրայ բազմած երեկոյեան
այն սքանչնլի ժամերուն մեր աշ-
խատութենէն դադրած՝ հագոյ հա-
ճարէ մը դորձն ընթեռնուլէ յուղ-
եալ դու ինձ կ'ցուցնէիր քնքուշ
մատիկներովդ Երկինքն ինձ հա-
մոզելով թէ որպէս Նախախնամողն
իւր արփին լոյսն առաքած է աշ-
խարհի , ծաղկունքն սիռած է խըն-
կարոյր դալարիին վրայ զիւր ա-
րարածներն դոհացնելու համար ,
դու ալ ինչ մը կ'վնտուէիր օդնած
ըլլալու համար , և անմիջապէս ձե-

ոացս մէջ կը զցտեղէիր փոքր ինչ
գումար մը սուրբ տաճարին սեամին
վրայ ծնրադրող և Աստուծմէ իւր
զաւակաց համար լումա մը ինդ-
րող հօրն համար : Այսչափ վեհ
սիրտ մ'ունէիր . և կ'յիշե՞ս թէ սոյն
ժամայն ես ալ 'փափսայի քեզթէ
դու մեծ մարդ պիտի լինիս . մը-
տաբերելով անտարակսյո թէ բը-
նութիւնն ստեղծող զօրութիւնն օր
մը այդ լումայից հաշիւն առած
նոցա միոյն փոխարէն բիւրապա-
տիկ և թերեւս անհունօրէն պիտի
վարձատրէ :

Քաղցրիկ եղբայրս , քո այդ
սիրաը որ անմեղ մանկան մը սրբ-
աէն ալ աւելի հեղիկ է . քո այդ
սիրաը որ զթութեան յորդարտղիս


աղբիսը մը և առաքինութեանց տա-
ճար մ'է , այսօր ևս քո վիճակի
բարձրութենէն առիթ գտած՝ ըդ
քեզ կրկին դիմել կ'տայ մեծագոր-
ծութեան : Եղբայրա, մեծ պատիւ
համարած եմ ես զքեզ մեծագործ
կոչել , վասնզի առեւէ աւելի առ
բենել կը սիրեա . Մեծ է ձեռնարկու ,
բայց վարձքն անհուն : Այդ 20
անտերունջ տղայոց թէ նիւթական
թէ մոտաւորական և թէ բարոյա-
կան պէտքերն խնամելն , օր մը եր-
կընքի մէջ Սերորից ու քենորից
դասին մէջ բազմած ատենդ այդ
20 որբ թշուառներն իրենց օրհ-
նութեան տաւիղն ի ձեռին կալեալ
առ Անվախճանն քեզ համար բա-
րեխօսեցնել է :

Ես այս գիրովս չունիմ այլ
ինչ ձեզ խօսելիք բայց եթէ ձեզ
ձեր ձեռնարկին մէջ յարատեւեցնե-
լու իրը քաջալեր մը . վասնզի գուք
այսօր այնալիսի ձեռնարկ մը կ'կա-
տարէք որ մեծագործութեանց էն
վերինն է . զի հայութիւն տա-
կաւին իւր խանձարուրին մէջ
եղած ատեն փոխան կաթի լոյս
կ'մատակարարէք : Եւ արդար
եւ մեծանձնութեան արժանի
դործ :

Եւ ես եղբայր իմ , հարազատ
քոյրդ լինելուս և քեզ նման իւր
գործերովն անմահացած եղբօր մը
վրայ մեծացած և վեհացած կ'մադ-
թեմ որ օր մը առաւել մեծ մարդ
լինելով առաւել մեծ դործոց ձեռ-

Նարկելու փառաց վարձատրութիւն
նըն ընդունիք Երկնքէն :
Յուսով եմ :

ՔՊ ԿԱԹԱԳԻՆ ՔՊՅՐԴ
* * *



1 Յունվար 1877

ԱԶԵԽԻ ՏԻԿԻՆ

Ոչ իբր քաղաքակրթական
պարտաւորաւթենէ մը գրդեալ ,
այլ նոյն խակ Աղքային լուսոյ յա-
ռաջդիմութեան նկատմամբ ցնծու-
թեան անկեղծ զգացումէս յուղ-

եալ կ'փութամ խնդութեան դիրս
առ ձերդ Աղնուութեան ուղղել :
Ես այսօր զձեղ ոչիբր նորա-
տի մայր մը շնորհաւորել և ձեր
մանկան ծնունդը երդել կ'գամ ,
այլ իբր ամբողջ գերդաստանի մը
երջանկութեան նախամայրը , Աղ-
գութեան մը փրկութեան հրեշ-
տակը : Զի ինչպէս մի օր հաստա-
տեց Տիկին գաճբան այն նշանաւոր
ֆունստացի ազգային գաստիարա-
կուհին երբ Մեծն Նարօլէօն զինքն
կոչած խնդրեց թէ արդի երիտա-
սարդութիւնն լաւ դաստիարակեալ
լինելու համար ի՞նչ կը պակսի —
հայրեր , պատասխանեց հրաշալի
տիկինն :

Եւ ապարէն ձեր դաւակը որ



ութօրեայ երախսայ մ'է , կընայ ձեզ
նման հմուտ դաստիարակիչ մօր
մը խնամովն օր մը ՚ի սէր հայրեն-
եաց և աղդութեան Հայկայ աղե-
ղըն արձակել , Տիգրանայ սուրբ
կրել , Արտաշիսի բանակը կազմել
և Տրդատայ հսկայ բազուկը ունե-
նալ . կամ առաւել օգտակար Վաշ-
նեռէ մը բարձր հանճարն և դարուս
Վէհրու Խոհօն սիրտը վերաստեղծել :

Մի օր դարձեալ երր մայր մը
կը խնդրէր Եւրոպացի Հռչակաւոր
դաստիարակի մը թէ իւր զաւակը
լաւ կըթելու համար գիշերօթեայ
վարժարան մը դնելով խելացու-
թիւն ըրած կ'ըլլայ . պատասխա-
նեց զրեթէ չափազանցօրէն : « Զր-
կայ վարժարան մը որչափ ալ լաւ-

կազմեալ ըլլայ , չկայ մեծ հաս-
տատութիւն մը որչափ ալ իմաս-
տօրէն կազմակերպեալ լինի , որ-
չափ ալ բարեպաշտօրէն կարդա-
պահեալ լինի , որ մօր մը , հարա-
զատ մօր մը դաստիարակութեանը
հետ կարենայ բազդատելի լինի :

Սոյն երեւելի անձին այս կըտ-
րուկ պատասխանը օրքան ալ երե-
ւութապէս չափազանց համարուի ,
լուրջ մտքի մը կոկ դատողութեան
ներքեւ անհակառակելի ճշշմար-
տութիւն մ'է . զի բացարձակապէս
յայտնի է թէ այդ վարժարանքն
և հաստատութիւնքն վարողներն
որքան հմուտ դաստիարակներ կամ
դաստիարակուհիներ լինին , չու-
նին մօր մը անկեղծ դորտմանքն ,

չունին մօր մը բնութեան իրո իրեն
պատգամ տուած այն սրբանուէր
ձայնը թէ « սիրէ՝ զաւակու , լաւ
ապագայ մը պատրաստէ՝ նմա և
զայն այնպէս իմն կրթէ որ զքեզ
անմահացնող ժառանգն ունենաս » :

Մեծանձն Տիկին , կրկին և կրկին
առաքինի մայր մը լինելու համար
ձեզ համար բարեմաղթ մը ընելէս
վերջ կ'մաղթեմ անկեղծապէս թէ
իւրաքանչիւր Տիկին որ մայր լի-
նելու կ'պատրաստուի , ձեզ պէս
ուսեալ և լաւ դաստիարակեալ լի-
նին , ձեր կորովի հանճարն և ձեր
վեհ սիրտն ունենան որպէս զի մեր
Աղջն ալ պարծի ըսելով թէ Հայն
ու յառաջդիմելու քայլեր կ'առնու-
ի վերջոյ , խնդրեմ , բարեհա-

ճեցէ՛ք ընդունիլ յարդանացս հա-
ւաստեօքն իմ սիրոյ բարեւներն :

ՔՈ ԲԱՐԵԿԱՄՈՒՀԻՆ

* * *



4 Յունիոն 1877

ԲԱԶՄԵՐԱԿԱՑ ԾՆՈՂԱԳ ԽՄ

Առաւել նուիրական քան ըս-
տիպիչ պարտաւորութիւն մը զիս
կը փութացնէ կրկին ձեր ծնողա-
կան հովանաւորութեան ներքեւ
շունչ մը սահեցնել , այդ շունչը
նոյն իսկ ձեր իւրաքանչիւր օրեայ
վաստակոց և քրտանց կաթիներու
սրտիս մէջ յառաջ բերած արձա-
գանգը կրնայ համարուիլ , այդ-

շունչը բուն իսկ անկեղծ շնորհաւ-
կալութիւն մ'է . և ապաքէն շնոր-
հակալութիւն մը երախտագիտու-
թեան մը ծաղիկն և սրտի մը առ
իւր բարերարն ունեցած նուիրա-
ցումն է : Եւ արդարեւ փոքրի մը
դէպ առ մեծն ունեցած երախտա-
գիտութիւնն սրտի նուիրացումէ մը
բարձր ի՞նչ կրնայ լինել , աղնիւ
ծնողքս :

Արդարեւ բարեխնամ ծնողք
իմ , ես զինքս իմ պարտաւորու-
թեանց մէջ թերի կ'գտնեմ , սոյն
ինքն ես զինքս տկարամիտ կ'կար-
ծեմ եթէ ձեզ նման ժրաջան ծը-
նողաց մը դորձերն ամէն վայր-
կեան ՚իյուշ ածելու բաղդը չու-
նենամ , վասնդի ձեր ինձ նըկատ-

մամբ ունեցած մեծագործութիւն-
քըն յաճախ չը յիշելն նոցա կարո-
դութեանց անտեղեակ լինելէ :

Մարդկութիւնն յայնժամհսկայ
քայլեր առած կ'լինի , հայութիւնն
լիովին իւր նպատակին հասած
կ'համարուի յորժամ իւր ծոցին
մէջ գտնուող ընտանեաց ծնողք
զիւրեանց զաւակունքն այս տե-
սակ քրտնաջանութիւնն յանձն ա-
ռած , այսպիսի կանոնաւոր դրա-
բոցներ առաքած զանոնք օրինա-
ւորապէս ուսմանց և գիտութեանց
մէջ աշխատեցնելու տենչն ունե-
նան : Միթէ հոս պէտք ունի՞մ
ձեր խոհականութեան յանդիման
գասակարդել միառ մի ուսման և
գիտութեան ամբողջ աշխարհի ըն-

ծայած շահուց աստիճանն և զայն
յայտ յանդիման մինչեւ իւր կա-
տարելութեան զենիթն ձեզ ներ-
կայացնելու կարիքն : Դուք, ծը-
նողքս, ինձմէ լաւ կ'անչնաք լա-
մառթին ֆուանսացի հոչակաւոր
պուեախն սա խօսքը թէ Տարբեկ էլլ-
եւու Հործ Արտինչեր էն :

Բնութիւնն ամեն ծնողաց վը-
րայ ներշնչում մ'ունեցած է . ըը-
նութիւնն զիւրաքանչիւր ծնողս ձօ-
նով մը օժտած է : Զաւակունքն
սիրելու և նոցա վրայ գորովելու
հանգամանքն իւրաքանչիւրի յա-
տուկ է , բայց նոցա մէջ գտնուած
աստիճանաց տարբերութիւնն ևս
յիշողութենէ վրիպեցնելու չէ :
Ծնող մը իւր զաւակը կ'սիրէ և նորա

ապագայն երաշխաւորելու համար
զայն որ և իցէ արհեստի մը կը
ձեռնարկեցնէ և սովաւ իւր պար-
տաւորութեանցը մէջ անթերի կը
համարի զինքն : Դարձեալ ուրիշ մը
մասնաւոր գրամագլուխ մը կը յատ-
կացնէ առանց զայդ գրամագլու-
խն վարել տալու եղանակին մէջ
յաջող ընելու համար նորա մը-
տաւորական կարողութիւնքն զար-
գացնելու : Եւ արդէն սա ալ բա-
ւական եղած է ծնողք մը տպա-
հովեցնելու թէ զիւրեանց զաւա-
կըն սիրած են : Սակայն դուք,
պատիւ ունիմ ձեզ կոչել առա-
ծնողքս , դուք այսօր իմ ապա-
գայս կանխատեսելով՝ զայն ապա-
հովելու համար ինձ գրամագլուխ

մը հայթայթելու կ' ճգնիք մինչ
ցայսօք , որով ոչթէ մասնաւորու-
թիւն մը այլ լիովին աշխարհ մը
վարելու յարմարութիւնը դամնելու
վիճակին մէջն եմ . վասնզի այժմ
զաշխարհ վարելու զօրութիւնը ոչ
Արքայներունն է ոչ պալատական-
ներունը , այլ միայն ուսեալներու-
նը , կըթեալներունը միայն :

Կ' վերջացնեմ զիրս , խնդրե-
լով ձեզմէ թէ բարեհաճիք ընդու-
նիլ 'ի խորին սրտէ երախտագիտա-
կան զգացմանցս հետ յարդանացս
ողջոյնն , որով՝

Մնամ

ՅԱԻՑ ԶԵԶ ԵՐԱԽՑԱՊԱՐՏ
ՈՐԴԻ ԶԵՅ

* * *

1 Յունվար 1877

ԱԶՆԻՒ ԱՂՋԱԿԱՍ

Եթէ հաւաստաս թէ բնութիւ-
նըն իւր օրինաց մէջ աղդոյ է և
միանդամայն հաստատ , հաւաստա-
ուրեմն թէ ծնողի մը կենաց եր-
ջանկութեան արժէքը իւր զաւա-
կաց և մանաւանդ իւր աղջիկ զա-
ւակաց բարելաւութեան ու բարե-
կըթութեան մէջ կը կայանայ :

Արդարեւ զաւակս , բարե-
բաստութիւն չէ^շ ինձ տեսնել թէ
դու ուսանօղական ընթացքիդ մէջ
յառաջադէմ քայլեր առանց , ըզ
քեզ ըստ բաւականին բարեմաս-
նութեանց մէջ կըթած կ' տենչաս

նաեւ թերի հանգամանաց տէր
քոյրերդ կասարելութեան շա-
ղին մէջ ածելու փափաքն ունե-
նալ : Զաւակս , այժմ լսու կընամ
տեղեկանալ թէ կենաց ասպարէ-
զին մէջ էն մեծ դերն խաղացողն
մայրական դաստիարակութիւնն է :
Աղջիկս , ես զբեղ ՚ի մանկտի տիոց
պարզասիրութեան մէջ կըթեցի ,
դու այժմ յայդմ քո գաղափարքն
զարգացուցած ՚ի հրապարակ կ'ել-
նես : Ապաքէն այդ մասին ունե-
ցած գաղափարքդ թէ կոկ և թէ
լուրջ են , սակայն իրբեւ զբեղ
ծնող մայրդ կընամ քեզ տեղեկա-
ցընելու իրաւունքն ունենալ թէ
տակաւին դու ալ թերի ես քո
գաղափարացդ մէջ : Քո Դեկտեմբ

բեր 9 յօդուածիդ մէջ պէճնասի-
րութենէ յառաջ եկած դրամական
տագնապներն լսու ՚ի կարդ դասած
էիր . լրջօրէն զգացուցած էիր թէ
այսօր հայազգի ընտանիքներն
թշուառ , աղքատ և կործանման
վիճակի մէջ գնողն սովորաբար
պճնասիրութիւնն է : Սակայն այս
սահմանդ խիստ անձուկ է . ասի
ամեն կարգի անհատի համար չ'է :
Հարուստը առանց կործանման վի-
ճակ մ'ալ ստանալու կընայ մինչեւ
աստիճան մը պերծանալ . աղջիկս ,
առաւել լսու բացատրած լինելու
համար պէտք էիր նվաթական վը-
նասներէն զատ բարոյականի աղէտ-
քըն ևս ՚ի լսու ածել : Դու քո հա-
յաղգի քոյրելուդ ողղած էիր

իսուքերդ՝ այն քոյրերուդ՝ սրոնք աղդին ապագայն լուսաւորած կը լինէին եթէ փոխանակ քուրչերու եղիսին ներքեւ մնապարծօրէն ուռած եթէ փոխանակ առաւօտէն մինչ երեկոյ հայելիին դէմն նախախնամողին մարդուն համար էն առաջին պարզեւն եղող թանկագին ժամերն լոկ դիմաց դեղեց կութեան զոհելու, մոքերնին մըշակելու համար օրուան դէթ երկու ժամն նուիրէին, վասնդի աշխարհի մէջ ինչ վիճակ որ ալ ունենայ մարդ խը միակ միսիժարութիւնն իւր գիտութիւնն և իւր ուսումներն պիտի լինին : Գեղեցկութիւնն շատ շուտ կ'թառամի, բայց գիտութիւնն ոչ երրեք բայց եթէ

վոփոխի : Վերջապէս կենսական խնդրոյ մը վրայ ճառած էիր, սակայն յիշողութենէդ վրիպած թէդու կ'խօսիս այն հայազգի քերցդորք կոչում ունին ապագայ սերընդեան մը դաստիարակիչն լինել:

Աղջիկս, այս ամեն դիտողութիւնքն քեզ ծանօթացնելէ վերջ կ'փափաքիմ քեզ խրախոյս մը տալ թէեւ միշտ տեսութենէս հեռիլինելուդ համար տիրած՝ սակայն քո վերջին այդ գիրն որ ուսման յառաջդիմութեանդ ապացոյցն է, զիս ուրախացնելով հանդերձ համոզեց թէ առաւել լաւ է ընառ հրապարիչ տեսութիւնն չի վայելել քան մարդկային ընկերութեան ոգէտ և անօդուած անհատ

մ' ընծայել :

Եթէ ունին մարդիկ առաջին
տեսչ մը և իղձ մը այն ալ անմա-
հանալին է . արդ՝ ո՞ր գործ այնչափ
կատարեալ անմահութիւն է քան
ուսեալ զաւակ մը թողուլ աշխարհի
հանդիսին մէջ :

Ի վերջոյ պահանջում մ' ունիմ;
կը փափաքիմ որ զայն գործադ-
րելու աճապարես , այսինքն տա-
րեկան ուսմանցդ յառաջդիմու-
թեան հաշիւն ինձ առաքես , որով
զիս երջանկութեանս մէջ կրկն
կ' ապահովես :

ՔՊ ՄԱՅՐԴ
* * *



1 Յունվար 1877

ՄԵՄԱՐԳՈՅ ԿՆՔԱՀԱՅՐՍ

Նոր տարւոյ առթիւ նախ իմ
յանկեղծ սիրոյ բղխեալ յարդանք-
ներս և ձեր դիրքէն առթեալ ակ-
նածանքներս ձեզ մատուցանելէ
վերջ կ' գամ անչափ իմն իմ երախ-
տագիտութեանս ծաղիկը ձեր վե-
հանձնութեան ոտից ներքեւ սփռել :

Դուք կնքահայրս , ինձ նը-
կատմամբ հայրէ մը աւելի խնամա-
մակալ , մօրմէ մ' աւելի գորովող
և եղբօրմէ մ' աւելի խանդաղատող
ու սիրող էք :

Մրտի մեծ ցնծութեամբ ըն-

կալայ այն գրեանքն զորս ինձ ա-
ռաքած էիք զիս աշխարհի մոլու-
թեան քառուէն փրկութեան դը-
րախտը բարձրացնելու համար Գի-
տեմ ամենքն ալ յատկապէս իմ
վիճակիս համաձայն ընտրած՝ այն-
պիսի գրքեր են որոց մէջ ակներեւ
կ փայլին ճշմարտութիւն, բարու-
թիւն և գեղեցկութիւն այն երրեակ
և անբաժանելի քորքն :

Գիտեմ, գուք ինձ զանոնք ա-
ռաքած էք ոչ իբր օրուան առ-
թիւ նուէր մը, այլ իբր քաջալեր
մը դէպ յընթերցափրութիւն։ Եւ
ապաքէն կրկնակի ցնծութիւննե-
րով բոլորուած եմ այսօր, զի լաւ
տեղեկացայ թէ ինձ ամենասիրելի
և ամենայարդելի կնքահայր մ'ու-

նիմ որ լաւ զզացած է թէ լու-
սաւորեալ ազգաց յուսումն ՚ի գի-
տութիւն յարուեստս յառաջդիմու-
թեան սկզբնապատճառ ընթերցա-
սիրութեան ծաւալումն եղած է։

Սիրելի կնքահայրս, զձեղ ձեր
վսեմ նպատակին մէջ արդիւնաւոր
գտնելու համար, կ'ապահովեմ ըդ
ձեղ որ զանոնք շատ կանուխ ա-
մենքն ալ ընթերցայ և նոցա մէջ
դասյ իմ վիճակին ամենայարմար
և ամենապատշաճ գիրք մը « ան-
մեղ աղջիկներ » անուաննեալ։ Գրքին
մէջ եթէ ամենալսեմ կէտ մը կար
այն ալ շատ մը աշխարհային մո-
լիներու քով դասակարգելն էր աշ-
խարհի մէջ ապրող անմեղներն որք
օր մը անշոշտ երկնքի մէջ յաւի-

տենականին պսակին պիտի արժա-
նանան . « թող թէ , կըսէ հըս-
չակաւոր հեղինակն , աշխարհի մէջ
երջանիկ արարածներն միայն նոքա
կրնան լինել : Եւ ապաքէն աշխարհի
հրապոյրքն և բնութեան դոհ և
համարձակ վայելումն ալ արդէն
անմեղներունն է զի գարաւոր վը-
կայութիւնք և իւրաքանչիւրի ան-
հատական փորձառութիւնք հաս-
տառած են թէ խղճի անդորրու-
թեան հետեւաբար անմեղութեան
մէջ է աշխարհային բարօրութիւնքն
և հետեւաբար երկնային բարօրու-
թիւնքն և երանութիւնքն » :

Վերջացնելով նամակս , կը
խնդրեմ՝ յարդոյ կնքահայրս , որ
չի զբանաք ընդունել իմ ցանհունս

ձեզ մատուցած չորհակալութեա-
նըս հաւաստիքն ՚ի խորին սրտէ :

ԶԵՐ ՍԱՆՈՒՀԻՆ

* * *



1 Յունվար 1877

ՅԱՐԳՈՅՑ ՏԿՐ

Խորին ակնածանօք և յարդա-
նօք կ' գամ մատուցանել զիրս ձեր
եծութեան Մոր իւր մէջ մի վսեմու-
թիւն եւս ունի :

Ես զձեղ և կ'կոչեմ ոչ թէ
վասնզի կարող էք զայն վնել այլ
թէ կ'կամիք զայն , և այս կէտն է
արդէն ձեր այլոցմէ ունեցած ա-
ռաջն և նշանաւոր տարբերու-
թիւնն :

Ապաքէն Նախախնամային կա-
րողութիւնն բնութեան օրինօք
յայտնած է մարդուն իրարու օգ-
նելու պէտքը , սակայն մարդիկ
լոկ անձնական շահու հաշով զայն
կ'արդիւնաւորեն : Բարութիւնն
մարդոց իրը պարտաւորութիւն շը-
նորհուած բարեմասնութիւն մ'է .
սակայն առաքինութիւն կոչեցին
մարդիկ զայն իրենց բնաւորութե-
նէն աղդեալ :

Զձեղ մեծադործ կոչելու պէտ-

քը խիստ կանուխէն զգացի , զի
դուք արտաքոյ կարգի հանդամա-
նօք ուրիշի բարիք կ'ործէք , նոյն
իսկ ձեր վասն անձին ունեցած
նիւթական շահն'ինկատի չ'առնլով:

Ձեր մեծադործութիւնքն կա-
նուխէն ինձ ներկայացուցած են
զձեղ . դուք պաշտպանելի կը
խնդրէք նորա բարեգործութիւն
կատարելու , նմա աշխարհի մէջ
ասահով և բարեբաստ կեանք մը
շնորհելու համար :

Ազնիւ տէ՛ր , այսօր առանց
վարանելու կ'գիմեմ ձեր դըթու-
թեան աղքիւր-սրտին որ կազմ և
պատրաստ է մեծադործութեան
ովկէաններ նուլ . բայց ես ձեր
պաշտպանելիներու էն ստորինը

այլ էն անմեղը, այս մատղաշ հա-
սակի մէջ ոչ բնութեան օրէնքէն
ազգեալ ոչ շաքար մուրալու և ոչ
անօթութեանս իբր յագեցումկամ
ծարաւոյս իբր զովացում ձեզմէ
նիւթական խնամք մը կ'ակնկալեմ:
Զեր մեծագործութեանց ովկէանի
մի շիթն ալ կարող է իմ պէտքս
լնուլ: Ես ձեզմէ բարոյական ա-
կրնկալութիւն ունիմ, միտքս մը-
շակելու պէտք ունիմ: Զեր ինձ շը-
նորհած լրւմաներն եթէ հազարա-
ւորներ ալ լինին, կրնան շուտ, խիստ
շուտ սպառիլ. սակայն զիս վար-
ժարան մը յաճախեցնելով մինչեւ
իմ մահս և գերեզմանէս անդին
ալ կրնամ շարունակուիլ գործքե-
րովս :


Արդ՝ մեծագործ տէ՛ր, մի
զանաք ցնծացնել աղքատիկ մը
որ փոքրիկ մանկիկ մ'է, եթէ
վարձք մ'ալ չունենայ ձեր բարե-
գործութեան համար, Ամենաբարձ-
րելոյն ձեզ համար բարեխօսելու
անմեղ հասակին ունի:

Եւ զայդ ևս յուսալու հըմ-
տութիւնն ունիք արդէն դուք:

ՄՆԱՄ

ՅԱԻԿՑ ԶԵԶ ԵՐԱԽՑԱՊԱՐՑ
ԽՈԽԱՐՑ ՄԱՆԿԻԿ

* * *



1 Յունվար 1877

ՍԻՐԱԾՈՒՆ ՈՐԴԵԱՆ ԿՄ

Ինչպէս ամեն սկիզբ իւր վերջըն , ամեն ծագումն իւր վախճանն այսպէս և ամեն ծնունդ իւր մահըն ունի : Բնութիւնն որ ամեն մարմնոց աճելու զօրութիւնը պարգեւած է , սպառելու յատկութիւնն ևս նորա ծոցին մէջ դրած է : Եւ ահա լաւ օրինակ մը կը հանդիսանայ սմա իմ անցելոյն և արդի դրութեան դանազանութիւնքըն : Անխուսափելի է այս օրէնքն,

լաւ ՚ի միտ առ զայն որդեակ : Ես որ մի ոտքս աշխարհի հըրապուրից մէջ կոխած և միւս ոտքըս գերեզմանի անդունդին մէջ գլուրած կատարեալ հաւասարակշռութեամբ մը մի աչօք աշխարհի հէշտութիւնքն և թշուառութիւնքն լիովին իմն փորձառութեամբ զննած և միւսով գերեզմանէն անդեն դոյ եղած երանութիւնքն դիտած կ'խորհիմ , այդ քննութիւններէս արդիւնք մը դոյացուցած լինելու , և իմ պարտաւորութիւնքս անթերի կերպիւ լրացուցած լինելու համար իբր քեզ օրինաւոր և վերջին դրամակլուխ մը թողելու համար իմ վերջին օրերուս մէջ քեզ յիշատակ կ'թողում այս գիրս :

Որդեակս , աշխարհի մէջ
զանձն կառավարելու եւ այլոց
հետ ապրելու գիտութիւնը ապա-
քէն կարող ես փորձով ունիլ ,
սակայն տակաւին այդ անփորձ
հասակիդ մէջ մի՛ գուցէ առաջին
և երկրորդ զոհողութիւնք ևս ու-
նենաս : Հայրական գթասիրտըզ-
գացումն է որ զիս կ'մղէ քեզ մի
քանի խրատք կարդալ :

Մարդկութիւնը տակաւին խոր
խանձարուրին մէջ տակաւին ուս-
մանց , գիտութեանց և արուես-
տից վրայ լսւ չի տեղեկացած ,
նոյն ինքն մեր մանուկ հասակին
մէջ ապրելու և այլոց հետ վար-
ելու խիստ դիւրին միջոցներն ու-
նէր , առանց գործոյ մարդ լինե-

լու՝ մէկ մարդավարական և շո-
ղոքորթական խօսք բաւ էր բաղդ-
մը գիղելու : Բաւ էր մարդու մը
Աստ- ու ու ու ու ու է ըսել եւ հարստու-
թիւն մը ժողովելու յոյսը ունե-
նալ : Դատաւորք փոխանակ ար-
դարութիւն պաշտպանելու կողմէ-
նակալութեամբք անօրէնութիւնք
գործելու կ'հարկադրէին :

Զաւակս , արդի քաղաքադի-
տութիւնն ուսում և գիտութիւն
և հանդերձ սոքօք քրանաջան աշ-
խատութիւն կ'պահանջէ . գործոյ
ձեռնարկի արիութիւն , գործոյ
մէջ յարաւելութիւն և արդարու-
թեան անթերի գործադրութիւն :

Զաւակս , ապրած երկրիդ օ-
րինաց և սովորութեանց հետ այն-

պէս վարուէ՛, որպէս կ'վարուի
կատարեալ օրէնսգէտ մը իւր օ-
րինագրքին հետ։ Աստուծոյդ հետ
պաշտէ կրօնքդ։ Եներեն յարդէ
իբր քո հարազատ հայրը։ Նորա
աշխարհի փորձութեանց մէջ ան-
կած և թերեւս զերծած ալ են։

Կազմէ մի այնպիսի ընտանիք
որ իւր սահմանին մէջ նաեւս ու-
սած լինի արդի աշխարհին քաղա-
քականութիւնը, եւ ամենէն վերջ
ու ամենաօգտակարն ջանա՛ ունե-
նալ զաւակ մը որ աշխարհին հան-
ճարներու և գործոյ մարդոյ պատ-
մութեան մէջ էջ մ'ալ ինքն դը-
րաւած լինի։

Որդեա՛կս, շատ որդեսէր
հայրեր իւրեանց զաւակաց մեծա-

մեծ դրամագլուխներ կ'թողուն
իւրեանց մեռած վայրկենին բայց
ես սոսկ այս դրամագլուխս կը
թողում։ Արդարեւ այն անհեղեղ
գումարներէն ալ աւելի արդիւնա-
ւոր է եթէ նորա իմաստին լա-
տեղեկանաս և զայն լիուլի դոր-
ծադրելու ջանա՛ս։

Որդեա՛կս ջանա՛ պատուել
յիշատակս յաւէտ։

ՔՈ ՀԱՅՐԴ

* * *



Ա ՅՈՒՆԴՎԱՐ 1877

ՆԱԶԵԼԻ ՔՆԿԵՐՈՒՀԻՍ

Սիրտս ՚ի արոփ , աչերս ՚ի
Ժպիտ ընկալայ քո անկեղծ ըզ
դացմամբ լի անուշաբոյր նամակդ
և վայրիկ մը ինքզինքս Երկնային
դրախտի մը շքեղ թագուհին հա-
մարեցի՝ քեզ պէս սրտակից մը
ունենալուս համար :

Հոդեկիցս , գիրդ յուզիչ էր :
Եւ հոգիս զդացման ծայրայեղու-
թեամբ վերացաւ դէպ յանհու-
նոթեան եթերն . խուզեց խու-

դարկեց այն զօրութիւնը որ դքեզ
յառաջ բերաւ , քո սիրտը ստեղ-
ծեց :

Զիս ազնուասիրտ կոչած էիր
Եւ այդ համոզումէդ խրախուս-
եալ զիս անդամ հրաւիրած էիր
նորակազմ նպաստէւ ընկերութեան :
Յաւիտեան երախտապարտ եմ որ
սիրտս ճանչցած էք եւ սիրով ու
կարի խնդութեամբ կ'ընդունիմ
այդ հրաւէրը . ինձ մեծ փառք հա-
մարելով մասնակից ըլլալ այն ա-
ռաքինեաց կարգին որք իրենց ան-
խախտ սկզբունք հաստատած են
աշխարհի եւ երկնքի էն իմաս-
տունին սա պատգամը թէ Սէրեց՛ +
Շէմեանս օդնեցէր , Տէմեանց :

Աղնիւ Ընկերուհիս , կ'հաւա-
կ

պամ թէ ինձ կը շնորհուի այս
ինդքսյն նկատմամբ լոկ մի առաջ
ջարկութիւն ընելու պատիւը :

Ես ինձի համար անձնական
կարծիք մը ունիմ թէ Ընկերու-
թիւններն իրբեւ խըեանց յարա-
տեւութիւնը պահող տարր մը իւր-
եանց ծոցին մէջ պէտք է կան-
գուն պահեն հրապարակախն թերթ-
մը . ասի ինչպէս ըստ անձնական
կարծիք մ'է , սակայն կրնայ քըն-
նադատութեան առարկայ լինել ,
՚ի նկատի առնլով սա հետեւեալ
կէտն՝ թէ այդ թերթն կրնայ նոյն
իսկ իւր ընտրեալ անդամներու
սրտին մէջ տածել թշուառաց օգո-
նելու առաքինութեան նկատմամբ
սիրոյ գաղափար մը , եւ նաեւ ա-

պազայ ընտրելիներու նկատմամբ
եւս գոգոսիչ դործիք մը եւ դարձ-
եալ Ընկերութեանս կարեւոր ե-
ղած հրատարակութեանց միջոց
մը , եւ ամենաառաւելի Ընկերու-
թեան ալ կրկնակի նիւթական շահ
մը կրնայ հայթայթել . եւ եթէ
կարողանամ սոյն առաջարկիս մէջ
յաջողիլ , ես նոյն ինքն յօժարա-
կամ կ'ընդունիմ զայդ թերթն
խմբագրելու անձնուիրութիւնն այլ
սակայն զՁեր համեստութիւնն ես
ինձ մասնաւոր ընկերակցութեանս
կոչելու պատիւը կ'ունենամ :

Ազնիւ Ընկերուհիս , իրբե-
կրկին կարեւոր դիտողութիւն մը
կ'ընեմ ձեզ թէ Ընկերութեանս
ընտրելեաց դասը սահմանարակ

մի՛ ընէք . կրնաք առանց ո եւ է
ապօրինաւորութեան բաց ՚ի իդա-
կան սեռի անդամուհիներէ արա-
կան սեռէ ևս անդամներ ընդու-
նիլ նիւթական շահն բազմապատ-
կելու համար :

Այս նիւթիս վրայ ձեղ տա-
կաւին մասնաւոր առաջարկներ ու-
նիմ , սակայն ձեր տեսութեանը
կը կարօտիմ : Արդ 1877 թունվ .
և ցերեկ ժամ՝ 8 կը խոստանամ
զձեղ տունս ընդունիլ :

Մնամ

ԿԱԹՈԳԻՆ ԸՆԿԵՐՈՒՀԻԴԻԴ

* * *



1 Յունիկար 1877

ՔԱՐԵԽՆԱՄ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՔ ԻՄ

Ժպտած է հուսկ ուրեմն մեղ
համար գժխեմ բախտին խոժոռ
դէմքը . միամեայ փորձառութիւն
բաւ է արդէն ձեր ժրաշանութեամբ
դործոյ մարդ լինելու հաւաստիքն
ձեղ և թէ ամբողջ Ազգին ներ-
կայացնել :

Ժամանակը իւր անհունու-
թեան ծոցէն ահա տարի մ'ալ
գլուրեց իւր անցելոյն շարից մէջ
և եթէ հետք մը չի թողուց շո-
տերու համար , դուք զձեղ անմա-

հայուցիք ձեր գործքով եւ զձեղ
նաեւ ուսման , գիտութեան , ար-
ժեստից կամ որ նոյն է աշխարհի
մարդ կերտեցիք : Դուք այնդիախ
վարժարան մը կը խնամէք , որ
իւր բարեկարգութեան մասին կը ը-
նամ համարձակիլ թէ միւս ամէն
աղդային վարժարանքն կրնայ գե-
րազանցել : Զեր ընթացքը լակո-
նական ոճով իմն ներկայացնելու
համար դուք Եւրոպական վարժա-
րանաց սովորութեանց ստուերն
միայն չէք շոշափած այլ նոյն իսկ
նոցա իրական տիպարը կը ներ-
կայացընէք . չէ թէ միայն նոցա վի-
ճակին ձեր հմտութեամբն կընաք
նոցա դրբերէն և գրութիւններէն
տեղեկանալ , այլ նաև ես լաւ գի-

տեմ թէ զձեղ պարունակող ամ-
բողջութեան մէջէն ունիք մին կամ
միւսն՝ որք Եւրոպական ոչ միայն
երկրորդական՝ այլ նաև առաջին
վարժարանաց լաւ և բարեպաշտօ-
րէն կազմակերպեալ գրութեանց
նոյն ինքն ականատես եղած են :

Ես տեսի վարժարանք ուր յա-
ճախող ուսանողք և ուսանողու-
հիք , իբր բանտ կը դիմէն անդ .
Ես իբր հետաքրիբ ուսանող մը և
վառվուն պատանի մը ուղեցի
դորա պատճառին տեղեկանալ և
իբր Ազգոսի աշերով զննելով՝ գը-
տայ թէ ոչ միայն բանտ մը այլ
նոյն իսկ դժուկք մը կը ներկայա-
ցընէք՝ թէ՛ ընդհանուր դաստիա-
րակին անհմտութեամբն եւ ան-

կիրթ բարութն , թէ դասասուաց
տգիտութեամբն և թէ զայս կէ-
տերն կուրօրէն չի նշմարող հոգա-
բարձութեան մը չնորհիւ :

Արդ՝ աղնիւ Հա՛ք , թէ մեր
խղճին և թէ աշխարհի քաղաքա-
կըթութեան դէմ գործած կը լի-
նիմք եթէ ձեղ նման անդուլ վաս-
տակօք ծանրաբեռնեալ բարերա-
բաց ՆՈՐ Տարւոյ , ՆՈՐ օրուան
առթիւ մեր անկեղծ սրտէ բղիւ-
եալ խորին երախտագիտութիւնքն
հրապարակաւ ձեղ մատուցանել
զանամք :

Սակայն իբր ազատ գալրոցի
մը աղատախօս աշակերտն կ'փու-
թամ նաև ձեր ճարտարապետա-
կան այդ շնորին զոր կ'պատրաս-

տէք , թիւր կողմն ալ ձեղ յայտ-
նել թէ ձեր ճակատին վրայէն
ջնջելու համար առ յապայն ու-
նենալիք արատն և թէ մեր յառաջ-
դիմութեան պէտքէն ստիպեալ :

Նոր տարին իւր Նոր գործոց
հետ կը պահանջէ նաեւ Նոր դաս-
տիարակ մը . անցեալն իւր հին պաշ-
տօնէին միջոցաւ ինչ շփոթութիւն-
ներ որ ունեցաւ ալ Նոր տարին
բաւական է կ'աղաղակէ : Դաս-
տիարակ մը որ զի ճանաչէր այ-
բուբենը , չ'ունի որ և է հմտութիւն
հետեւարար տղայ մը դաստիա-
րակելու վիճակներն պայմաններն
ու միջոցներն , այլ ևս այս Նոր
տարւոյ և մանաւանդ այս դըպ-
րոցի դաստիարակը չի կրնար լիներ

Ես երեսփոխանաբար իմ դասաւ.
կիցներուս կ'յայտնեմ ձեղթէ ար-
դէն ամեն զոհողութիւն յանձն ա-
ռած եմ սոյն կարեւոր և կենսական
խնդիրն արդիւնաւորելու համար
զի եթէ դաստիու մը իւր աշա-
կերտին միտքը կ'բեղմնաւորէ ,
դաստիարակն ալ առաւել օդտա-
կարն նորա սիրտը կը զարդացնէ .
աշխարհ ալ ինձ հետ կը վկայէ սմա,
այսօր Վահեքն չափ բարձր արժա-
նիք մը շնորհելով իւհու , զի ինչպէս
առ հանճարի մարդ է , առ եւս սըր-
տի մարդ :

Ի վերջոյ կը պատուեմ զձեղ իբր
ձեր պաշտօնին վայել յարդանօքնն
ի դիմաց

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԳԻ ԱՇԱԿԵՐՏՈՅ
• • • • • ՎԱՐԺԱՐԱՆԻ

